Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Գ. Մակիչյան
«31» մայիսի 2016թ.

Հաստատված է
Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի
2016թ. մայիսի 31-ի որոշմամբ
(արձ. No17)

Կարգ
Հյուսիսային համալսարանի
ասպիրանտուրայում ուսուցման

1. Հյուսիսային համալսարանի ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը 3 տարի է, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարի:

2. Համալսարանի ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է սահմանված կարգով կազմված ու հաստատված ուսումնահետազոտական պլանի հիման վրա:

3. Ասպիրանտուրայում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:

4. Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է՝

ա) ունենա սահմանված կարգով հաստատված ատենախոսության թեմա և գիտական ղեկավար, համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան և առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն,

բ) հանձնի ուսումնահետազոտական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) և ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախո-սությունը և սահմանված կարգով անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

5. Ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

6. Ինչպես ուսումնառության ընթացքում, այնպես էլ գիտական հետազոտություններ կատարելիս՝ ասպիրանտն օգտվում է համալսարանի գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից և այլն:

7. Ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի տարեկան մեկ անգամ ատեստավորվում է համալսարանի համապատասխան ամբիոնի կողմից: Համալսարանի տվյալ ամբիոնում, ֆակուլտետի (դեպարտամենտի) խորհրդում, գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական

կրթության կենտրոնում, համալսարանի գիտական խորհրդում պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների ու նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունները ու հաղորդումները:

8. Սույն կանոնակարգի 6 կետում նախատեսված կարգով ատեստավորում չանցած ասպիրանտը համալսարանի ռեկտորի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

9. Համալսարանից հեռացված ասպիրանտը կարող է վերականգնվել ասպիրանտուրայում՝ վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար:

10. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին, իր ցանկությամբ, անվճար տրվում է համալսարանի կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը համալսարանի ռեկտորին ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11. Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ, իսկ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորող ասպիրանտին՝ նույն ժամկետով արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

12. Համալսարանի ռեկտորը կարող է սահմանված կարգով կրթաթոշակ ստացող ասպիրանտին արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել կրթաթոշակի հավելավճար:

13. Ասպիրանտների գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է համալսարանի կողմից՝ մեկ ասպիրանտի համար տարեկան 50 ժամ հաշվարկով:

14. Համալսարանի ռեկտորը անհրաժեշտության դեպքում կարող է ասպիրանտի գիտական ղեկավարի աշխատավարձին հավելավճար սահմանել:

Հյուսիսային համալսարանի
գիտական հետազոտությունների,
նորարարական ծրագրերի և հետբուհական
մասնագիտական կրթության կենտրոն

«20» մայիսի 2016թ.